ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ

Ա. ԸՆՏԱՆԻՔ

Իմ մանկութիւնից շատ փոքր բան կարող եմ գրել, որովհետեւ նա անցաւ այնքան շուտ եւ այնքան դատարկ կերպով, որ շատը ես ինքս չեմ յիշում:

Բայց երբ մտաբերում եմ անցեալը, իմ տխուր եւ յիմարութիւններով լի անցեալը, կրկին զարթնում են վաղեմի յիշողութիւնները, եւ որպէս մթին խաւարի միջից, նկարւում է իմ առջեւ մանկութիւնը իր անմեղ-երեխայական կերպարանքով:

Ահա մինը միւսի ետեւից երեւան են գալիս ծանօթ պատկերները. —

Ես տեսնում եմ հայրենի տնակը իր հին, ժամանակի աւերմունքից մաշուած պարիսպներով: Դեռ նոյն տերեւախիտ ծառերը հովանաւորում են նրան իրանց հսկայական ճիւղերով, դեռ նոյն ճնճղիկները երգում են ոստերի վրայ, ինձ թւում է, որպէս թէ ծանօթ լինէին նրանց խորամանկ երեսիկները:

Կարծես, շատ ժամանակ չէ անցել, կարծես, հէնց երէկ լինէր այդ, — ես տեսնում եմ իմ պառաւ տատին, նստած իր սովորական տեղում, մեր խրճիթի դռան հանդէպ: Դարձեալ նոյն ընկուզենին պատսպարում է ալեւոր գլուխը ամառային արեգակի կրակոտ ճառագայթներից: Նա նստած է, որպէս միշտ, լուռ եւ մտախոհ կերպով: Նրա ծնկների վրայ մրափում է իր մտերիմ՝ ահագին մազոտ կատուն, երեւի, քաղցր երազներ է տեսնում:

Սիրելի տատ, եւ այս ոոպէիս քո երեսի մուգ-դեղնագոյն խորշոմների մէջ ես տեսնում եմ նոյն բարութիւնը, որպէս առաջ, եւ այժմ քո լի գթով աչքերը նայում են իմ վրայ վաղեմի սիրով: Ինձ թւում է, որպէս թէ դեռ լսում եմ քո իմաստալից խրատները. — «Ֆարհատ, որդի, բաց գլխով մութի մէջ ման չգաս, չարքերը կը զարկեն գլխիդ... յօրանջելու ժամանակ երեսիդ խաչ հա՞ն, որ սատանան չմտնէ փորդ... գիշերը մաստաք չծամես, մեռելները կնեղանանե... Այսպիսի շատ խրատներ տալիս էիր դու ինձ, զգուշացնում էիր, որ աւերակների մէջ չմտնեմ... զգուշացնում էիր, որ գերեզմանատան մօտից մենակ չանցնեմ... ու սեւ կատոի հետ չխաղամ...

Տատս կոչւում էր Շուշան: Նա ժառանգել էր իր մօր անունը: Թէ քանի՞ տարեկան էր, — ես հիմա էլ չգիտեմ: Բայց նա ականատես էր եղած այնպիսի անցքերի, որոնց վրայից դարեր էին սահել: Այսոամենայնիւ, նա բոլորովին չէր կորցրել իր ժրութիւնը: Կը տեսնէիր, մի անվաստակելի մեքենայի պէս,